ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/222

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2018թ. թիվ 27/26-3/24342-18 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 24.12.2018թ. գրության հիման վրա 27.12.2018թ. թիվ 27/26-3/24342-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/222 ընթացակարգի շրջանակներում 09.01.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.12.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հագուստի և հանդերձանքի ձեռքբերման նպատակով 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ԵԸԱ» ծածկագրով պայմանագիր «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի հետ: 2018թվականի դեկտեմբերի 6-ին միակողմանի լուծվել է նշված պայմանագիրը, հիմք ընդունելով 2.1.7.1 կետը, համաձայն որի Ընկերությունը չի կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ Պատվիրատուի կողմից բազմաթիվ էլեկտրոնային, հեռախոսային կարգով ապրանքի մատակարարման պահանջ ներկայացնելու փորձերը անցել են ապարդյուն: Պայմանագրով սահմանված՝ երեխաների համար նախատեսված 100 հատ տաբատից Ընկերության կողմից մատակարարվել է ընդամենը 43 հատ, իսկ մնացյալ քանակը ամեն անգամ պահանջ ներկայացնելիս Ընկերությունը մոտակա ժամկետներում մատակարարման խոստումներ տալով հետաձգել է, որի արդյունքում երեխաների մեծ մասին այդպես էլ տաբատ չի տրամադրվել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/222 ընթացակարգի շրջանակներում 09.01.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/222 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/222 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ԵԸԱ» ծածկագրով «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ. Պատվիրատուի գնման հայտի հիման վրա «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին մատակարարել ընդհանուր 100 հատ տաբատ:

2. Համաձայն՝ 23.11.2018թ. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության, ինչպես նաև Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 1 ակտի և հարկային հաշիվների՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 43 հատ տաբատ:

3. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված 06.12.2018թ. թիվ ԱԿ-160/18 ծանուցմամբ «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ հիմք ընդունելով «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված Պայմանագրի 2.1.7.1 և 2.5 կետերը, Պայմանագիրը միակողմանի լուծվում է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2018թ. թիվ 27/26-3/24342-18 գրությունը,

«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.12.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***<u>խախտել է պայմանագրով նախատեսված</u>*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***<u>պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ԵԸԱ» ծածկագրով «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.5-րդ կետով սահմանվել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ. Պատվիրատուի գնման հայտի հիման վրա «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին մատակարարել ընդհանուր 100 հատ տաբատ:

13.08.2018թ. Պատվիրատուի կողմից 29.05.2018թ. N 58 հրամանի հիման վրա կազմված արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն սեպտեմբերի 13-ին ԱԱ9571277771 հաշիվ ապրանքագրով բերել է 100 հատ տաբատ: Հանձնաժողովի անդամները արձանագրել են, որ տաբատներից 57-ը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին (արտադրման երկիրը չի համապատասխանում բնութագրում

նշվածին): 100 տաբատից 43-ը ընդունվել է տեխնիկական բնութագրին համապատասխան, իսկ մյուս 57-ը՝ ետ է վերադարձվել «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին:

Համաձայն՝ 23.11.2018թ. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության, ինչպես նաև Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 1 ակտի և հարկային հաշիվների՝ «Մադէլ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 43 հատ տաբատ:

24.10.2018թ. «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ներկայացվել է գնման հայտ, որի համաձայն՝ Ընկերությանն առաջարկվել է մինչև 29.10.2018թ. մատակարարել 57 հատ տաբատ:

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված 06.12.2018թ. թիվ ԱԿ-160/18 ծանուցմամբ «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ հիմք ընդունելով «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված Պայմանագրի 2.1.7.1 և 2.5 կետերը, Պայմանագիրը միակողմանի լուծվում է:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետով և նույն կետի 2.1.7.1 ենթակետով սահմանվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ընկերության միջև 30.05.2018թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ԵԸԱ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում չի իրականացրել Պայմանագրով նախատեսված 57 հատ տաբատ մատակարարելու իր

պարտականությունն, էականորեն խախտելով Պայմանագիրը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2018թ. թիվ 27/26-3/24342-18 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ